ՀՀ Կրթության և գիտության
նախարարության Սյունիքի մարզի
Լեռնաձորի հիմնական դպրոցի

Կերպարվեստ առարկայի խմբակի
տարեկան ծրագիր

2022-2023 ուս.տարի

Ուսուցչուհի՝ Գ.Աղասարյան

Կերպարվեստ

<<Պատանի նկարիչներ>> խմբակի տարեկան թեմատիկ պլանավորում

Շաբաթական 2 ժամ, տարեկան `68

Խմբակի ղեկավար՝ Գ.Հ.Աղասարյան

2022-2023 ուս.տարի

<<Պատանի նկարիչներ>> խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով:

Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը

2. Նպատակները

3. Խնդիրները

4. Վերջնարդյունքները

5. Բովանդակությունը

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը ,նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովքրքղի գիտելիքների, կարողականությունների ու հմտությունների զարգացման վրա:

Նպատակներ

-Ստեղծագործական ընթացքի հետաքրքրության զարգացում

-Ձգտում դեպի լավ արդյունքներ

-Զարգացնել սովորողների ստեղծագործական ընդունակությունները

Խնդիրներ

- Զարգացնել սովորողների մոտ գույնի,չափի ,ձևի զգացումը

-Դաստիարակել աշխատասիրություն և ցանկություն սեփական ուժերով հասնել հաջողության

-Ձևավորել սովորողների մոտ նկարչական գիտելիքներ,կարողություններ և հմտություններ

-Զարգացնել գեղագիտական ճաշակը

-Խթանել երևակայության զարգացումը

Նկարչության տեսակներ

Մոնոտիպիա, տերևների հեռքեր, մատնանկարչություն, մոմիկանկարչություն, գունավոր թելերով նկարչություն, ցայտանկարչություն, ճմրթաց թղթով նկարչություն, պոանտիլիզմ:



Վերջնարդյունքները

−Կկարողանա ներկայացնել տարածության պատկերման հիմունքները

(հեռանկար, հեռավարության վրա օբյեկտների փոքրացում):

-Կտարբերի նյութերը մշակելու և դրանցով աշխատելու հնարքներին, և պատկերման տարբեր տեխնիկաների ճիշտ կիրառումը սեփական աշխատանքում:

- Կկարողանա նկարել բնության տեսարաններ կամ կպատկերի հիշողությամբ՝ կատարված դիտումների և ուսումնասիրությունների հիման վրա:

- Կիմանա այլ նյութերի և տեխնիկական միջոցների մասին, որոնք օգտագործվում են նկարազարդումների ժամանակ:

- Կծանոթանան հայկական մանրանկարչության հետ:
-Կկարողանան արտանկարել արվեստագետների աշխատանքները և կստեղծեն սեփական աշխատանքները:

68 ժամ

1-ին կիսամյակ-30 ժամ

N	Թեմա	Բովանդակություն	Ժամերի Քանակը
1	Աշխատատեղի կազմակերպում	Անվտանգությունը նկարչական աշխատանքի ընթացքում:Վարպետների քաղաքում, տեղեկություն հայտնի նկարիչների մասին:Ինչպես դառնալ նկարիչ:	2
2	Հիմնական գույները: Սառը և տաք գույներ	Գունավոր մատիտներով աշխատանք, ինչպես խառնելով երկու գույն ստանալ նորը	2

3	Աշնանային բնապատկեր	Սովորեցնել նկարել երկինքն և աշնանային բնապատկերը։Սովորել ճիշտ խառնել գույները	2
4	Ծիածանաշխարհ	Աշխատանք հիմնական գույներով Սովորեցնել նկարել ամպիկից անձրև՝ կաթիլներով կամ գծերով։Սովորել ճիշտ խառնել գույները	2
5	Անտառի բնակիչները	Սովորում ենք նկարել ոզնիներին անտառային բնանկարում	2
6	Նկարում ենք բնօրինակից	Բնանկարի պատկերում գունավոր մատիտներով	2
7	Ծանոթություն համաշխարհային հայտնի նկարիչների ստեղծագործություն-ներին։Աշունը հայրենի եզերքում	Նկարում ենք բնանկար։Աշխատանք ջրաներկով<<Լուսաբաց>> թեմայով	2
8	Հատապտուղներ և մրգեր	Պատկերում ենք լույսը և ստվերը մոխրագույնի, շականակագույնի, և սև գույնի օգնությամբ։ Սովորում ենք նկարել մրգերը զամբյուղի մեջ	2
9	Ազգային տարազ	Նկարում ենք հայկական տարազով տիկնիկներ	2
10	Նկարում ենք տարվա խռհրդանիշը	Պատկերում ենք ծավալ ունեցող առարկաներ	2
11	Նկարչություն ջրաներկով	Վրձին <<թագուհու>>հնարավորությունները	2
12	Ձմեռային բնանկարը պուանտալիզմի տեխնիկայով	Հեռու և մոտիկ, մեծ և փոքր պատկերներ	2
13	<<Գալդ բարի՛, Նոր նառի>>	Պուանտալիզմ, ցայտանկարչություն, կետավոր նկարչություն։ Ազատ թեմա	2
14	Նկարում ենք փաթիլներ	Մոնոտիպիյա	2
15	Նկարում ենք տոնածառ և ձնեմարդ։ Նոր տարվա բացիկ	Աշխատանք ապլիկացիայի միջոցով Աշխատանք ջրաներկով և գուաշով	2

2-րդ կիսամյակ 38 ժամ

16	Նկարում ենք մուլտ հերոսներին	Ջրաներկով աշխատանք՝ Նկարում ենք պինգվին	2
17	Ինչպես են ստեղծում մուլտիպլիկացիան	Ծանոթություն անիմացիոն նկարչության հետ	2

18	Նկարում ենք ծաղիկներ	Աշխատանք յուղամատիտներով	2
19	Խոնավ թղթի վրա նկարչություն	Ջրաներկով նկարում ենք խոնավ թղթի վրա երկինքն ու ամպերը	2
20	Իմ սիրելի հեքիաթային հերոսը	Աշխատանք գունավոր մատիտներով	2
21	Կախարդական աշխարհ	Զարգացնում ենք երևակայությունը։Ազատ թեմա	2
22	Մատնանկարչություն Ուրախ արեգակը	Աշխատանք հաստ թղթի վրա գուաշովն ջրաներկով	2
23	Նախշանկարչություն Ծաղիկներ և թիթեռներ	Պատկերում ենք տարբեր բույսերով նախշանկարչություն	2
24	Իմ սիրելի կենդանին	Աշխատանք գունավոր մատիտներով	2
25	Իմ երազանքի տնակը	Աշխատանք գունավոր մատիտներով	2
26	Ծանոթություն մեծ դիմանկարիչների ստեղծագործությունն երի հետ	Մատիտով պատկերում ենք մարդու դեմքը	2
27	Իմ ընկերոջ կամ ընկերուհու դիմանկարը	Աշխատանք գունավոր մատիտներով	2
28	Հեքիաթին հյուր	Աշխատանք գունավոր մատիտներով	2
29	Կրկեսի ծաղրածուն	Աշխատանք ջրաներկով	2
30	Ստորջրյա թագավորություն։Ձկնե ը ծովում կամ ակվարիումի մեջ	Սովորում ենք նկարել տարբեր տեսակի ձկներ Նկարում ենք մեր Երկիր մոլորակը	2
31	Հայկական մանրանկարչության	Կատարում ենք սեփական մանրանկարչության աշխատանքներ	2
32	Նկարում ենք տարբեր գույների ձկներ	Ծանոթացում հայտնի ծովանկարիչների հետ	2
33	Գարնանային ծաղիկներ Բազմաշերտ նկարչություն	Ջրաներկով նկարում ենք ծաղիկներ մարգագետնում	2
34	Ստեղծագործական հաշվետվություն	Նկարների ցուցահանդես։ Խմբակի անդամները ընտրում են ամենալավ աշխատանքները	2

Խմբագրեց՝ Գ.Հ.Աղասարյանը